


Գ. Տիրացյան

## ԱՐՏԱՇԵԱ Ա-Ի ԱՐԱՄԵԱՏԱՌ ՆՈՐԱԳՅՈՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի մայիս ամսին, Սևանա լճի հարավ-արևմտյան կողմում, Մարտունու շրջանի Ծակքար գյուղի դաշտերում, կուտնտեսական Խ. Վ. Խլղաթյանը հայտնաբերեց արամեատառ մի փոքր կոթող: Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահության գիտա-մեթոդական խորհրդին այդ մասին հայտնեցին նույն գյուղի ուսուցիչներ Խ. Ալեքսանյանը և Ն. Խաչատրյանը<sup>1</sup>։ Կոթողը տեղափոխվեց Երևան և այժմ գտնվում է Հայաստանի Պատմական թանգարանում<sup>2</sup>։



<sup>1</sup> Հ. Մարտիրոսյան, «Հնագեաի օրագրից», Սովետական Հայաստան, 1957 օգոստոսի 21:

<sup>2</sup> Օգտվում ենք առիթից շնորհակալություն հայտնելու Գ. Գ. Ղաֆադարյանին արձանագրությունը ուսումնասիրելու ընձեռած հնարավորության համար:

Այս առաջին արամեատառ արձանագրությունը չէ, որ գտնվել է Հայաստանի տերիտորիայի վրա, Սևանա լճի շրջանում<sup>1</sup>, 1906 թ. Կարմիր (Ղուլալի) գյուղում (Նոր Բայազետի շրջան) եր. Հալայանը հայտնաբերել է մի քար արամեական տառերով: 1932 թ. Ս. Բարխուդարյանին հաջողվեց գտնել արամեատառ մի երկրորդ արձանագրություն, Մարտունու շրջանի Կզնուտ (Ղաբանլուխ) գյուղում:

Նշված երկու կոթողները, չնայած, որ վնասված ու թերի էին, ծառայել են որպես ուսումնասիրության նյութ բազմաթիվ հետազոտողների համար, որոնք այն տեսակետին են, որ արձանագրություններում խոսքը ն. մ. թ. 2-րդ դարի Հայաստանի թագավոր Արտաշես Ա-ի մասին է:

Այդ հետազոտողներից առաջիններից էր Լենինգրադի Պետական Էրմիտաժի աշխատակից Ա. Յա. Բորիսովը<sup>2</sup>, որը ընթերցեց Արտաշես թագավորի և նրա հոր՝ Զարեհի անունները: Արձանագրության վերջին տողը նա չվերծանեց, համարելով այն իրանական կամ հայկական գեղեսի չհասկացված բաներից կազմված: Կարևոր ավանդ մտցրին այդ քարերի ուսումնասիրության գործում Էրմիտաժի և ԳԱ-ի Արևելագիտական ինստիտուտի Լենինգրադի քաժանմունքի աշխատակիցներ Ի. Մ. Դիակոնովը և Կ. Ի. Ստարկովան<sup>3</sup>, որոնց հաջողվեց վերջին տողում կարդալ «հողամաս» կամ «բաժանել» արամեական բառը: Դրանով էլ ավելի հավանական դարձավ գեղեսի 1941 թ. արված ակադ. Հովսեփ Օրբելու ենթադրությունը այս փոքրիկ կոթողները սահմանափակ լինելու մասին<sup>4</sup>: Նույն արձանագրությունները ուսումնասիրելիս տրամագծորեն տարբեր տեսակետ է հայտնել ֆրանսիական դիտնական Ա. Դյուլյոն-Սոմերը<sup>5</sup>: Նրա առաջարկած վերծանման ու մեկնաբանման համաձայն, Սևանի արձանագրություններում, խոսքը ինչ որ պաշտամունքային նույնականերով կատարվող, Արտաշես թագավորի ձկնորսական գործունեության մասին է: Դյուլյոն-Սոմերը ամենայն վստահությամբ կարդում էր «ձուկ», ինչպես նաև սրա կոնկրետ տեսակը «ծածան» բառերը, սուր «բաշել», «ձգել» (որսալ իմաստով) բայը:

Սույն հաղորդման առարկա հանդիսացող արամեատառ կոթողը, որը իր արտաքին տեսքով ու արձանագրության բովանդակությամբ նման է առաջին երկուսին, սակայն, հիանալի պահպանված լինելով, նախորդների համեմատությամբ ամբողջական է<sup>6</sup>, վերջնականապես հերքում է նմանօրինակ ընթերցանության ամենաշնչին հնարավորությունը:

<sup>1</sup> См. К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1952, էջ 162 և հաջորդ.

<sup>2</sup> Մի երրորդ կոթող, որի մի քանի տառանիշների մասին ոչինչ որոշակի տեսլ չի գրելի, գտնվել է Մարտունի շրջանի Զորագյուղ գյուղից ոչ շատ հեռու:

<sup>3</sup> А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, В. Д. И., 1946, № 2.

<sup>4</sup> И. М. Дьяконова, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, В. Д. И., 1956, № 2.

<sup>5</sup> И. А. Орбели, Заметка в газ. «Известия», М., 31, I, 1941.

<sup>6</sup> A. Dupont-Sommer, Deux inscriptions arameenes trouvees pres du lac Sevan (Armenie), Syria, XXV, № 1—2 (1946—48), pp. 53—66.

<sup>7</sup> Կոթողի վերին մասը ավարտվում է երեք բնորոշ աստիճանաձևերով և լիթվին համապատասխանում է Մ. Քորենայու այս տիպի կոթողների նկարագրությանը (տե՛ս դիրք Ի, գլուխ Ծ2): Կոթողի չափսերը հետևյալն են. բարձրությունը՝ 77 սմ, լայնությունը՝ 36 սմ, հաստությունը՝ 17 սմ:

Արձանագրության առաջին երեք տողում մենք կարդում ենք Արտաշես թագավորի և նրա հոր՝ Զարեհի անունները, ապա «բաժանեց» բառը և «բաժանեց» բայը: Զորքորդ տողի սկզբում մենք հանդիպում ենք «հող» գոյականը (այստեղ որպես ուղիղ խնդիր), ապա արամեերենում լայն տարածում գտած «միջև», նախդիր-մակբայը: Հինգերորդ, վերջին տողում փորագրված է երեք տառանի մի բառ: Առաջին երկու տառերը, անկասկած, արամեական այբուբենի (քոֆ) և «րեշ» տառանիշներն են, իսկ երրորդը՝ փյունիկերենի, նալշի-մուստեմի և Կրմաղիի արձանագրությունների համապատասխան նիշի նմանությամբ, մենք առաջարկում ենք կարդալ «Պաղե» արամեական տառը: Այդպիսով մենք ստացած կլինենք երեք՝ «քրծ» բաղաձայններից կաղմված «մաս», «բաժին» իմաստն ունեցող արամեական բառը, սակայն, մեր կարծիքով, արձանագրությունը ավարտված չէ: Վերջին բառին հաջորդում է հարթ, վնասվածքի որևէ հետք չկրող տարածություն: Հնարավոր է, որ գրիչը շտապել է ու արձանագրությունը անավարտ թողել: Կզնուտ-Ղարանլուխի արձանագրության ամենավերջին հատվածում պահպանվել է «յող» տառը (մեր կոթողի համապատասխան տեղում այն բացակայում է, որը մի լրացուցիչ «նուն» կամ «միմ» տառի հետ կկաղմեր ջննարկվող արձանագրության վերջին տողի «մաս», «բաժին» գոյականի հոգնակիի մասնիկը, դրանով ամբողջացնելով արձանագրությունը:

Ահա արձանագրությունը լատինական տառադարձությամբ.

1. 'RTHSSY MLK
2. BR ZY ZRYTR
3. RWNDKN HLQ
4. 'RQ BYN
5. QRS [YN]

Թարգմանաբար մենք կստանանք հետևյալը.

«Արտաշես արքան Զարեհի որդին Երվանդական բաժանեց հողը մասերի (բաժինների)»:

Ծակբար գյուղի կոթողը լավ պահպանված լինելով, հնարավորություն է ընձեռում հին Հայաստանի պատմության նոր, հետաքրքիր հարցեր առաջ բաշելու:

Ինչպես վերևում տեսանք, բովանդակությունը ոչ մի կասկած չի թողնում, որ խոսքը հողի ինչ որ բաժանման մասին է, հետևաբար արձանագրությունն ունի մեծ նշանակություն հելլենիստական Հայաստանի հողային հարաբերությունները ուսումնասիրելու համար: Ի միջի այլոց, այդ մասին է վկայում նաև կոթողի հայտնաբերման տեղանքը. Սեանի արամեատառ կոթողների հայտնաբերման վայրերը ուսումնասիրելու նպատակով ս. թ. օգոստոս ամսին կաղմակերպված ԳԱ Պատմության ինստիտուտի արշավախումբը, շրջադայելով նոր Բաշադետի և Մարտունու շրջանները ծանոթացավ տեղի բնական-աշխարհագրական պայմանների և հատկապես Սեանա լճի արևմտյան և հարավային ափերին զուգահեռ ընթացող լեռնաշղթաների և լճի միջև տարածվող ընդարձակ բարեբեր հարթավայրերի հետ: Այդպիսի մի հարթավայր, իրենից ներկայացնում են Ծակբար գյուղից դեպի լիճը տարածվող դաշտերը, որոնց միջով հոսում են Ծակբար գետակի ջրերը, էլ ավելի բնորոշելով այս տեղամասի երկրագործական նշանակությունը: Այսպիսի

միջավայրում է տեղավորված եղել արամեաստառ արձանագրությունը, որի բովանդակության առնչությունը հողի հետ ամեն մի կասկածից վեր է:

Չնայած այս ամենին, դեռևս դժվար կլինի որոշակիորեն արտահայտվել ն. մ. թ. 2-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցող ագրարային կարգի այս միջոցառման կոնկրետ բնույթի և անմիջական նպատակի մասին:

Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ արձանագրությունը կազմված է լինել՝ թագավորի անունից, մի փաստ է, որ խոսում է այստեղ «Երկիր արքունիին»՝ թագավորական հողին վերաբերող մի միջոցառման մասին:

Հին Հայաստանի հողային հարաբերություններն ուսումնասիրողները վերջերս ի հայտ բերին «Երկիր արքունիի»՝ թագավորական հողի կառավարման և տնտեսական հաշվառվի հետ կապված ոստանիկության ինստիտուտի գոյությունը<sup>1</sup>: Ոստանիկները, որոնք իշխող դասակարգի ներկայացուցիչներն էին, թագավորական հողային ֆոնդից, որպես պայմանական տիրույթ, առանձին հողաբաժիններ էին ստանում, սրանցից դանձվող նարկը հավաքելու և այն արքունիք ուղարկելու պարտավորությամբ: Սևանի արձանագրություններում թերևս խոսքը այն հողաբաժինների մասին է, որոնք թագավորի կողմից պետք է հանձնվեին այս կամ այն ոստանիկին:

Մյուս կողմից, մեզ ավելի հավանական է թվում, որ այս կոթողները առնչվում են Արտաշես Ա-ի օրոք կատարված ժողովրդի վերաբնակեցման միջոցառումների հետ, երբ Արտաշես թագավորը «հրամայե զսահմանս դիւղից և ագարակաց որոշել, քանդի բազմամարդոյց զաշխարս Հայոց՝ եկամուտ բազում ածելով յաղգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս»:

Արտաշես թագավորի արձանագրության մեջ «Երվանդական» տոհմական անվան առկայությունը չափազանց հետաքրքիր մի փաստ է, որը արժանի է հատուկ ուշադրության:

Այժմ քաղաքարվեստ մի քանի դիտողություններով Ինչպես հայտնի է, սկզբնաղբյուրների մոտ նույնիսկ ակնարկ չկա Երվանդյանների և Արտաշեսյանների միջև որևէ ազդակցական աղերս գոյություն ունեցած լինելու մասին: Ինչ ավելին, Մ. Խորենացու հաղորդած տվյալները մեզ որոշ պատկերացում են տալիս կատաղի թշնամանքի կերպարանք ստացած Արտաշես—Երվանդ մրցակցության մասին, որն ավարտվեց վերջինիս սպանությամբ:

Հաշվի առնելով այս հանգամանքները, առնվազն տարօրինակ պետք է թվար, ուրեմն, Արտաշեսի կողմից իրեն ատելի նախորդների տոհմական անվան յուրացնելու փաստը: Սակայն, ինչպես մեզ թվում է, Արտաշեսի՝ այդ ակտից բխող ակնկալությունները հետևյալն էին. պետք էր նախ և առաջ արդարացնել կատարված արարքը (Երվանդի սպանությունը) ժամանակակիցների առջև: Հռչակելով իրեն Երվանդունիներից սերված, Արտաշեսը փորձում էր իր արարքին տալ քիչ թե շատ օրինական բնույթ: Վերը բերվածով դեռևս չէին սպառնում Արտաշեսի ակնկալությունները: Հայկական լեոնաշխարհում Երվանդունիները լուրջ օրինական իշխողներ ու թագավորներ չէին: Նրանք ի լրացումն այս բոլորի, ինչպես վկայում են բազմաթիվ աղբյուրներ (Քսենոփոն, Ստրաբոն, Կոմադենի արձանագրությունները), հանդես էին գալիս որպես Առաջ-

<sup>1</sup> А. Г. Периханян, Древнеармянские востаники, В. Д. 11., 1956, № 2, էջ 44 և հաջորդ.

<sup>2</sup> Սովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, դիրք Բ, դրուխ ԾԶ:

ջալոր Ասիայի հրբեմնի տիրակալ Աքեմենյանների հզոր տոհմի շառավիղներ։ Հետևապես, ազգակից լինել Երվանդունիներին, նշանակում էր ազգակից լինել Աքեմենյաններին։ Իսկ այս հանգամանքը 2-րդ դարի սկզբին Առաջավոր Ասիայում և հատկապես Փոքր Ասիայում գոյություն ունեցող պետությունների սիստեմում ուներ մեծ նշանակություն։ Աքեմենյան տրադիցիաների կենսականությունը նշված ժամանակաշրջանում մի փաստ է, որի կողքովը անցնել չի կարելի։

Ինչ վերաբերում է Արտաշեսյաններին, ապա շատ հավանական է, որ վերև հիշված հանգամանքը մի միջոց դարձավ իրենց ձեռքում դադափարապես դիմադրելու Հայաստանի դեմ ոտնձգություններ կատարող Սելևկյաններին ու ապա հռոմայեցիներին։ Մեզ թվում է, որ կային նաև ավելի լուրջ պատճառներ, կապված երկրի ներքին պրոցեսների հետ, որոնք կարող են բացատրել արձանագրության մեջ արտահայտություն գտած Արտաշեսի մտադրությունների իմաստը։ Ն. մ. թ. 2-րդ դարի սկզբում ուժեղ թափ էր ստացել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, որի անմիջական արդյունքը եղավ հայկական լեռնաշխարհի միավորումը։ Ինչպես սկզբնաղբյուրներն են վկայում, այդ միայն խաղաղ պրոցես չէր, այլ հաճախ ուղեկցվում էր բռնությամբ։ Այդ առթիվ բարդացվում էին հարաբերությունները արտաքին աշխարհի հետ։ Նման պայմաններում նվաճված ցեղերի և մի շարք պետությունների աչքում Արտաշեսը պետք է սթաված լիներ առանձնահատուկ հեղինակությամբ։ Միևնույն ժամանակ երկրի ներսում տեղի էր ունենում դասակարգային հարաբերությունների զարգացման պրոցես։ Անխուսափելի էր դարձել դասակարգային ներհակությունների սրումը։ Երկրի սոցիալ-տնտեսական հիմքերը շոշափող մի պոռթկման մասին, մեղ աղոտ տվյալներ են հասել Մ. Խորենացու միջնորդությամբ։

Նման պայմաններում, իշխող խավերը գլխավորող անձնավորությունը լրացուցիչ մի շարք միջոցներով պետք է ձգտեր ամրապնդելու իր դիրքն ու հեղինակությունը։ Ահա այն իսկական դրդապատճառները, որոնցով, ըստ մեր կարծիքի, ղեկավարվում էր Արտաշեսը իրեն հռչակելով Երվանդունի, այսինքն Երվանդ վերջին թագավորի օրինավոր հաջորդ և Աքեմենյան տոհմի շառավիղ։

Բացառված չէ նաև, որ Երվանդի անունը պարունակող «բավանդական» բառը վերաբերվի արձանագրության մեջ հիշատակվող հողին, հողամասին։ Ինչպես հայտնի է «կան» մասնիկը հայերենում հանդիսանում է աշխարհադրական անունների տարածված վերջածանց։ Հնարավոր է հետևապես ենթադրել, որ Արտաշեսը մասերի բաժանեց Սևանի շրջանի Երվանդ թագավորին պատկանող ինչ որ հողեր («բավանդական հողեր»)։ Այս տեսակետից հետաքրքիր կլինի մեջբերել վաղ միջնադարի պատմիչ՝ Մովսես Կաղանկատվացու միջնորդությամբ մեզ հասած տեղեկությունը այն մասին, որ Արտաշեսը նախքան Հայաստանին վերջնականապես տիրելը, Սևանի լճի ափերից է, որ վստեղ է Երվանդին<sup>1</sup>։

<sup>1</sup> «Պատմություն Աղուանից», Թիֆլիս, 1912, էջ 19-20։

Հիշատակված հատվածի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Երևանի Պետական համալսարանի ուսանող Լ. Բարսեղյանը։